



ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ընդդեմ կոռուպցիայի.  
Երևույթի ընկալումն ու հնարավոր լուծումները

ԵՐԵՎԱՆ 2006



Սույն հրատարակությունը ներկայացնում է «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի» կողմից «Փոքր և միջին ձեռնարկությունների կոռուպցիային դիմակայելու կարողությունների գնահատում և զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը, եզրակացությունները և դրանց հիման վրա մշակված առաջարկությունները:

Հետազոտությունը իրականացվել է ԱՄՆ Արտաքին գործերի դեպարտամենտի դրամաշնորհի շրջանակներում: ԱՄՆ Արտաքին գործերի դեպարտամենտը պատասխանատու չէ հրատարակման հեղինակների արտահայտած տեսակետների, եզրակացությունների ու առաջարկությունների համար:

Ծրագրի իրականացման ընթացքում աջակցության և համագործակցության համար «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը» շնորհակալություն է հայտնում հետևյալ կազմակերպություններին.

- Բիզնեսի զարգացման և աջակցության կենտրոն, ք. Վանաձոր
- Գեղարքունիքի մարզի Առևտրա-արդյունաբերական պալատ, ք.Գավառ
- Կոտայքի մարզի Առևտրա-արդյունաբերական պալատ, ք. Աբովյան
  - Լրագրողների «Ասպարեզ» ակումբ, ք. Գյումրի
    - «Հույս 98» ՀԿ, ք. Վայք



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



Քաղաքացիական Շահերի  
Պաշտպանության Աջակցության Ծրագիր  
**CIVIC ADVOCACY**  
SUPPORT PROGRAM - ARMENIA

Սույն հրատարակությունը իրականացվել է Քաունթերփարթ ինթերնեշնլի (CPI) Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի (CASP) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) օժանդակության շնորհիվ: Ծարադրված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի/Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետի հետ:



**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ընդդեմ  
կոռուպցիայի.**

**Երևույթի ընկալումն ու հնարավոր լուծումները**

ԵՐԵՎԱՆ 2006

Եվրախորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի» (GRECO) ս.թ. մարտի 10-ին հրապարակած Հայաստանի վերաբերյալ զեկույցի համաձայն՝ կոռուպցիան, հակառակ ձեռնարկվող տարաբնույթ հակակոռուպցիոն միջոցառումների, մեր երկրի համար մեծ խնդիր է մնում: Չեկույցը փաստում է, որ կոռումպացված են մասնավորապես դատական համակարգը, ոստիկանությունը, մաքսային և հարկային ծառայությունները, լիցենզավորումն ու սեփականաշնորհումը:

Չեկույցը Հայաստանի դեպքում մատնանշում է կոռուպցիայի երկու տարբեր դրսևորում՝ բարձրաստիճան կոռուպցիա, որը բնորոշ է քաղաքական կամ հանրային բարձրաստիճան պաշտոնյաներին և վարչարարական կոռուպցիա, որի կրողն են միջին կամ ցածրաստիճան պաշտոնյաները:

Սույն հրատարակությունը դիտարկում է վարչարարական կոռուպցիայի դրսևորումները փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում:

*Մեր ընթացիկ գործունեության մեջ չկա ավելի կարևոր բան, քան կոռուպցիայի դեմ պայքարն է: Դա մի արատ է, որն ախտահարել է ողջ աշխարհի հանրությանը:*

*Այն սոցիալական անհավասարության ու աղքատության հիմնախնդիրների կորիզն է:*

**Ջեյմս  
Վոլֆենտոն**

*Համաշխարհային բանկի  
Էքս-նախագահ*

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՈՒՆ**

Նախաբան .....	4
Ամփոփում .....	7
Ներածություն .....	9
I. Հետազոտության նպատակը, խնդիրներն ու հիմնական դիտարկումները .....	11
II. Մասնավոր ձեռներեցության զարգացումը խոչընդոտող հիմնական արգելքները	13
III. Կոռուպցիայի դրսևորումները ՓՄՁ ոլորտում .....	15
1. Կոռուպցիան հանրային ծառայությունների ոլորտում .....	15
2. Կոռուպցիոն փոխհարաբերությունների նկարագիրը .....	18
IV. Կոռուպցիային նպաստող հիմնական պայմանները .....	20
1. Վարչական գործընթացների և հանրային ծառայությունների մատուցման չափանիշների և կանոնների իրագելության աստիճանը .....	20
2. Գատական համակարգի հանդեպ վստահությունը .....	22
V. Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունը .....	23
1. Քաղաքական լուծումներ .....	23
2. Իրավական լուծումներ .....	26
3. Մասնավոր ձեռներեցությունը՝ ընդդեմ կոռուպցիայի .....	27
4. Գործարար ասոցիացիաները՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջոց .....	28
VI. Հիմնական դիտարկումներն ու եզրակացությունները .....	29
VII. Կոռուպցիայի շղթայի ճեղքումը .....	34
Հավելված 1. ՓՄՁ ներկայացուցիչները՝ կոռուպցիայի առանձին դեպքերի մասին	38
Հավելված 2. Ընտրանու բնութագիրը .....	45
Հավելված 3. Հարցաշարի նմուշ .....	47

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կոռուպցիան ողջ աշխարհում գնալով դառնում է հանգուցային հիմնախնդիրներից մեկը և՛ պետական և՛ հանրային հատվածների համար: Ըստ Թրանսփարենսի ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2005թ.-ին ուսումնասիրված 159 երկրներից այն դեռևս «մոլեգնում է» 70-ում: Այդ երկրների ցուցանիշը 5-ից ցածր է, երբ լավագույն /ամենամաքուր/ ցուցանիշը 10 է: Այդ գնահատման համակարգում Հայաստանի ցուցանիշը 2.9 է (2004թ.-ին 3.1-ի փոխարեն) և վկայում է կոռուպցիայի բավականին մեծ ծավալների մասին:

Գործարար միջավայրի և գործարարության վերաբերյալ 2005-ի Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի և Համաշխարհային բանկի համատեղ ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ կոռուպցիան որպես Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության ծավալման համար հիմնախնդիր ճանաչած ընկերությունների թիվը աճել է 2002թ.-ի համեմատ: Աճել է նաև որպես կաշառք վճարված գումարների մասնաբաժինը տարեկան շրջանառության մեջ: Ապօրինի վճարումները հիմնականում կատարվում են հարկային, մաքսային, դատական գործառույթների ժամանակ, ինչպես նաև արտոնագիր և պետական պատվեր ստանալու, և օրենսդրության վրա ազդելու նպատակով: Հատկանշական է, որ մաքսային, դատական և օրենսդրական ոլորտում կոռուպցիայի ծավալների առումով Հայաստանը առաջ է անցել ԱՊՀ մյուս և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրներից:

Այսօր մասնավոր հատվածը գիտակցում է կոռուպցիայի հետ կապված վտանգը, որը խոչընդոտում է արդար մրցակցությունը, արգելակում է ազատ շուկայի զարգացումը: Թեև կոռուպցիան ծանր բեռ է բուրբ տիպի ձեռնարկությունների ուսերին, այն առավել բացասաբար է ազդում փոքր և միջին ձեռնարկատիրությունների վրա:

Սույն հրատարակությունը ներկայացնում է «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի» կողմից «Փոքր և միջին ձեռնարկությունների՝ կոռուպցիային դիմակայելու կարողությունների գնահատում և զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը, եզրակացությունները և դրանց հիման վրա մշակված առաջարկությունները: Հետազոտությունը իրականացվել է ԱՄՆ Արտաքին գործերի դեպարտամենտի դրամաշնորհի փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակներում:

Երկրի 104 փոքր և միջին ձեռնարկությունների շրջանում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ կոռուպցիան դիտվում է որպես Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը արգելակող կարևորագույն գործոններից մեկը, և որ հարցման մասնակիցների մոտ կեսը անձամբ ներքաշված են եղել կոռուպցիոն փոխհարաբերությունների մեջ: Ըստ հարցման մասնակիցների, առավել կոռումպացված կառույցներն են պետական տեսչությունները և տեղական ինքնակառավարման մարմինները: Իսկ անկատար օրենսդրությունն ու վարչարարությունը, հարկման համակարգի ծանր բեռը, անբարենպաստ վարկային և քանկային համակարգը, ինչպես նաև հանրային հատվածի թափանցիկության պակասը, բյուրոկրատիան և անարդյունավետ դատա-իրավական համակարգը ճանաչվել են որպես մասնավոր հատվածի զարգացումը խոչընդոտող հիմնական արգելքներ:

Որպես վերը նշված արգելքներից ազատվելու միջոց հարցման մասնակիցները առաջարկում են այնպիսի օրենսդրական և վարչարարական միջոցառումների իրականացում, որոնք կապահովեն տեղեկատվության հասանելիությունը, գործառույթների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, պետական պաշտոնյաների բարեկիրք գործելակերպը, արդյունավետ վերահսկումն ու պատժամիջոցների կիրառման համակարգը, կոռուպցիոն դեպքերի արձանագրումն ու հրապարակումը և այլն:

Սիևնույն ժամանակ հեղինակները առաջարկում են միջոցառումների շարք՝ ձեռնարկատերերին կոռուպցիայի շոքայի ճեղքման խնդրի մեջ ակտիվ ներգրավելու համար: Դրանք են.

ա) հատուկ գործարար միավորման ստեղծում, որի խնդիրն է լինելու ՓՄՁ ոլորտում կոռուպցիոն դեպքերի արձանագրումն ու դրանց մասին տեղեկատվության գրանցումը

բ) առավել հաճախ հանդիպող կոռուպցիոն դեպքերի ընդհանրացումն ու դասակարգումը,

գ) կուտակված տեղեկատվության պարբերական հրապարակումը,

դ) օրենսդրության վերանայմանն ու կատարելագործմանն ուղղված լոբինգը,

ե) թափանցիկ գործելակերպի կորպորատիվ մշակույթի ներդրման խթանումը,

զ) պարբերական հանրային աուդիտը,

է) կոռուպցիայի վերաբերյալ հանրության իրազեկումը և այլն:

Հետազոտության արդյունքների և առաջարկությունների հրապարակումը առաջին անդրադարձն է Հայաստանում ՓՄՁ-ների՝

կոռուպցիայի հետ կապված հիմնախնդիրներին: Առաջ շարժվելու, երևույթի ընկալումն ու վարքագծի կարծրատիպերը հաղթահարելու համար օրենսդրական դաշտի կատարելագործման և կառուցվածքային բարեփոխումների հետ մեկտեղ անհրաժեշտ են ավելի խորը ուսումնասիրություններ ու վերլուծություններ, ավելի լայն իրազեկում, շահերի պաշտպանության քարոզարշավ և լոբինգ:

Սակայն, Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի հաջողությունը մեծամասամբ պայմանավորված է պաշտոնյաների, գործարար համայնքի, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, միջազգային կառույցների և այլոց բարի կամքով, համատեղ ջանքերով և համաձայնեցված գործողություններով:

*Տարածաշրջանային զարգացման կենտրոն/  
Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան  
նախագահ՝ Ամալյա Կոստանյան*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Յոթնամասուն տարի տևած համայնավարական անցյալը էապես խաթարեց մեր հասարակության արժեքների համակարգը: 1991-ի սեպտեմբերից ի վեր խարխուլ արժեքային համակարգի պայմաններում տեղի են ունենում արագ ընթացող տնտեսական բարեփոխումներ: Բնական է, որ նման պայմանները բացասաբար են անդրադառնում երկրի տնտեսական համակարգի թափանցիկության վրա:

«Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ընդդեմ կոռուպցիայի. Երևույթի ընկալումն ու հնարավոր լուծումները» հետազոտությունը իրականացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան 5 ամիս տևողությամբ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակներն էին.

- բացահայտել կոռուպցիայի հետ կապված այն հիմնախնդիրները, որոնց հետ առնչվում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում,
- բացահայտել գոյություն ունեցող այն ռազմավարությունը, որին դիմում են գործարարները կոռուպցիան շրջանցելու համար,
- ծավալել ՓՄՁ-ների շրջանում կոռուպցիոն ճնշմանը դիմակայելու վերաբերյալ քննարկումներ,
- նախանշել այն հիմնական միջոցները, որոնք կնպաստեն կոռուպցիայի նվազեցմանը ձեռնարկատիրության, մասնավորապես ՓՄՁ ոլորտում:

Հետազոտության հիմքում ընկած է հատուկ մշակված հարցաշար, որն առաջարկվեց Հայաստանի տարբեր մարզերում գործող ՓՄՁ ներկայացուցիչներին: Հարցման նպատակը ՓՄՁ ոլորտին առնչվող կոռուպցիայի համապարփակ պատկերը ստանալը չէր: Խնդիրը ՓՄՁ-ների շրջանում երևույթի ու դրանից ազատվելու համար կիրառվող միջոցների շուրջ քննարկումների ծավալումն էր:

Հետազոտության կարևոր արդյունքներից մեկը հարյուր չորս արձագանքած ձեռնարկությունների օրինակների հիման վրա կազմված ՓՄՁ-ների գործունեության ընթացքում առավել հաճախ հանդիպող կոռուպցիոն դեպքերի նկարագրությունն է: Նման դեպքերի նկարագրությունը կարող է քննարկման նյութ դառնալ այն ՓՄՁ զարգացման կառույցների համար, որոնք նպատակ ունեն օգնել իրենց շահառուներին՝ տեղեկացնելու հանրությանը առկա հիմնախնդրի մասին:

Պարզ է, որ հայաստանյան ՓՄՁ-ները հիմնականում առնչվում են կոռուպցիայի առանձին դրսևորումների հետ և, որ կոռուպցիան

Ֆինանսների, ժամանակի և այլ միջոցների կորստի պատճառ է հանդիսանում: Սակայն, հակառակ նախնական ենթադրության, հայաստանյան ՓՄՁ-ները անգեմ են կոռուպցիայի դեմ պայքարում: Շատերն ընդունել են գոհի կեցվածք, հուսալով, որ մակրո մակարդակում սպասվող բարեփոխումները որոշակի դրական արդյունք կտան նաև այդ բնագավառում: Հետազոտությունը ցույց տվեց նաև, որ փոքր և միջին ձեռնարկությունները չունեն կոռուպցիայի դեմ պայքարի մշակված ռազմավարություն: Ուստի նման ռազմավարության մշակումը՝ հասարակական սեկտորի և խոշոր ձեռնարկությունների խնդիրն է:

Վերջապես, հետազոտության և քննարկումների արդյունքում ձևավորվեց խնդրի լուծման հնարավոր մոտեցումների փաթեթ, որը կարող է հայաստանյան ՓՄՁ-ների համար նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: Այդ մոտեցումներն են.

- բիզնես էթիկայի չափանիշներին հավատարիմ, լոբինգի կարողությամբ օժտված պրոֆեսիոնալ ասոցիացիաների ստեղծումը,
- էթիկայի կողքսի ստեղծման նպատակով ՓՄՁ-ների կարողությունների զարգացումը,
- ընկերությունների պարբերական և արհեստավարժ հասարակական աուդիտի իրականացման կարողությունների զարգացումը,
- էթիկայի կանոններին համապատասխան գործող ձեռնարկությունների համար մրցանակաբաշխության կազմակերպումը:

Ներկայացվող հետազոտությունը կարող է դիտվել որպես ներածական կամ մեկնարկային հայաստանյան փոքր և միջին ձեռնարկատիրության խնդիրների շուրջ հետազայի շարունակական հասարակական քննարկումների համար:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչ վերջերս կոռուպցիայի հիմնախնդիրը ԱՊՀ երկրներում լուրջ չէր ընկալվում: Հաճախ այն դասվում էր զարգացման թույլ արգելքների շարքին, կամ էլ ուղղակի որպես անցումային շրջանում գտնվող նախկին կոմունիստական երկրներում բիզնեսի զարգացման համար վճարելիք գին:

Սակայն Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների վերջին ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կոռուպցիան էապես դանդաղեցնում է երկրների տնտեսական զարգացման տեմպերը, խոչընդոտում սոցիալական ծրագրերի իրականացումն ու քաղաքացիական հասարակության կայացումը և խաթարում գործարար մրցակցությունը: Ավելին, տարածաշրջանում տեղի ունեցած կոռուպցիոն սկանդալները ահազանգեցին հիմնախնդիրների լրջության մասին:

Այդ հիմնախնդիրներն են. թույլատվության դիմաց հանրային ծառայությունների կողմից անօրինական վճարումների պահանջը, պայմանագրի կնքման դիմաց պահանջվող «մաղարիչը», կազմակերպված հանցախմբերի կողմից շորթվող գումարները, հարկային թողտվությունները, պետական հովանավորչության ներքո խոշոր ձեռնարկությունների կողմից հարկերի վճարումից խուսափելը, հարկային մարմինների կողմնակալ վերաբերմունքը, և այլն: Ըստ Թրանսփերենսի ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման վարկանիշի մասին 2005 թ.-ի զեկույցի, Հայաստանը 88-րդն է աշխարհում: Տարածաշրջանի երկրների հետ համեմատելիս Հայաստանի ցուցանիշը բավականին լավն է՝ Իրան (88), Ռուսաստան (126), Վրաստան (130), Ադրբեջան (137), բացառությամբ Թուրքիայի (65):

Կարելի է փաստել, որ կոռուպցիան անհամեմատ ավելի մեծ ճնշում է գործադրում փոքր, քան թե խոշոր բիզնեսի վրա: Որոշ գնահատականների համաձայն կոռուպցիայի արժեքը հայաստանյան ձեռնարկությունների համար կազմում է տարեկան շրջանառության մոտ 10%-ը: Դա կենսամարտ մղող ձեռնարկության համար կյանքի կամ մահվան շեմն է:

Ինչևիցե, ըստ մեզ՝ հայաստանյան ձեռնարկատերերի մեծամասնությունը չի ցանկանում կոռուպցիոն փոխհարաբերությունների մեջ գտնվել: Դա թանկ է, ոչ արդյունավետ և վտանգավոր: Ավելին, մարդիկ սկսում են գիտակցել հարկերից խուսափելու և իրենց կամ իրենց ընտանիքներին մատուցվող խղճուկ սոցիալական ծառայությունների միջև գոյություն ունեցող ուղիղ կապը: Սակայն, միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ձեռնարկատերերը կոռուպցիային դիմակայելու

համար տեղեկատվության և աջակցության պակաս են զգում: Իրենք ստիպված են հանդուրժել երևույթը որպես բիզնեսով զբաղվելու անհրաժեշտ պայման:

Այնուամենայնիվ պետք է հավատալ, որ հայաստանյան փոքր և միջին ձեռնարկատիրության շրջանում կա հիմնախնդրի լուծման եղանակներ գտնելու համար բավարար փորձ և մղում:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը իրականացրեց 5 ամիս տևողությամբ ծրագիր, որն ուղղված էր ՓՄՁ-ների կոռուպցիայի դեմ պայքարում կարողությունների զարգացմանը: Ծրագրի նպատակն էր խթանել Հայաստանում էթիկայի կանոններին հավատարիմ բիզնես գործելակերպի ձևավորումը և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում բիզնես հանրության մասնակցությունը: Ծրագրի ռազմավարությունը նպատակ ուներ հայաստանյան ՓՄՁ-ներին օգնել բացահայտելու ու կիրառելու կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները: Այդպիսով նրանք իրենց առօրյա շփումների համար կկարողանան ձեռք բերել կոռուպցիային դիմակայելու համար վստահություն, փորձ և հստակ գործելակերպ:

Հայտնի է, որ առանց համապատասխան օրենսդրական և իրավական հիմքի, փոքր բիզնեսը կոռուպցիայի դեմ անօգնական կմնա: Սակայն, կոռուպցիայից ձերբազատվելու համար անհրաժեշտ է կիրառել «վերից-վար» և «վարից-վեր» մոտեցումները գուզահեռաբար: Ներկայիս ծրագիրը «վարից-վեր» մոտեցման օրինակ է:

Հետազոտության իրականացման համար 19 հարցից բաղկացած հատուկ հարցաշար է մշակվել: Հարցերը կարելի է բաժանել երեք խմբի.

- Անձնական վերաբերմունքը դեպի կոռուպցիան:
- Ձեռնարկատերերի վերապրած կոռուպցիոն դեպքերը:
- Հիմնախնդրի լուծման եղանակները:

Հետազոտության արդյունքների վիճակագրական արժեքը հարցման մասնակիցների փոքր թվի պատճառով գուցե մեծ չէ, սակայն ըստ հեղինակների՝ նույնիսկ փոքր ընտրանու կարծիքն ունի որոշակի արժեք և թույլ է տալիս կազմել հայաստանյան ՓՄՁ-ների կոռուպցիայի հետ առնչվող հիմնախնդրի իրական պատկերը:

Հետազոտությունը զուգորդվել է Երևանում, Շիրակի, Լոռու, Վայոց ձորի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում քննարկումների կազմակերպմամբ: Քննարկումներն ընթացել են կոռուպցիայի առանձին դեպքերի և այդ երևույթի դեմ պայքարի հնարավոր

միջոցների շուրջ: Արդյունքների վերլուծության հիման վրա ձևավորվել են կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված առաջարկություններ:

## **I. Հետազոտության նպատակը, խնդիրներն ու հիմնական դիտարկումները**

Համաձայն Ջոն Սալիվանի «Հակակոռուպցիոն նախաձեռնությունները ձեռնարկատիրության տեսանկյունից» հոդվածի (Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոն, ԱՄՆ, <http://www.cipe.org/programs/corruption/initiatives.htm>)՝ կոռուպցիայի դրսևորումները տարբեր են: Չնայած կոռուպցիայի ընդունված սահմանման համաձայն՝ դա պաշտոնական դիրքի չարաշահում է հանուն անձնական շահի: Տարբեր երկրներում երևույթի ընկալումը բնավ տարբեր է: Օրինակ՝ շատերն են համաձայն, որ պաշտոնյայի կաշառումը կոռուպցիա է: Սակայն, վարձու աշխատող բարեկամը (նեպոտիզմ), կողմնակալ պայմանագրերի կնքումը (քրոնիզմ), արժեթղթերի վաճառքի կամ գնման նպատակով ներքին տեղեկատվության չարաշահումը (ներքին գործարք) և նման այլ գործողություններ տարբեր երկրներում տարբեր կերպ են ընկալվում:

Կոռուպցիայի համար պարարտ հող կարող է դառնալ օրենքների կիրարկումն ու վարչարարությունը. օրինակ՝ աշխատանքային և մաքսային օրենսգրքերը, հարկային և արժութային կարգավորման մասին օրենքները և այլն:

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը» 2005թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Երևանի, Լոռու, Վայոց ձոր, Կոտայք և Գեղարքունիք մարզերում իրականացրել է հետազոտություն, որին մասնակցել են 104 փոքր ու միջին գործարարության ներկայացուցիչներ:

Հետազոտության նպատակներն էին.

- փոքր և միջին ձեռներեցության ոլորտին առնչվող կոռուպցիայի բնույթը և պատճառները,
- կոռուպցիայի դեմ պայքարում ՓՄՁ դերի բացահայտումը,
- հակակոռուպցիոն միջոցառումների խթանումը,
- ՓՄՁ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը,
- տեղական և ազգային մակարդակներում կոռուպցիոն դեպքերի բացահայտման պրակտիկայի ակտիվացումը,
- գործարար միավորումների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կոռուպցիայի դեմ պայքարում համագործակցության ձևավորումը,

- կոռուպցիայի և դրա առանձնահատկությունների վերաբերյալ հանրային բանավեճերի ակտիվացումը:

Հետազոտության խնդիրներն էին.

1. բացահայտել Հայաստանում մասնավոր ձեռներեցության զարգացումն արգելակող ամենաէական կոռուպցիոն բնույթի ադմինիստրատիվ և ինստիտուցիոնալ հիմնախնդիրները,

2. նույնացնել փոքր և միջին ձեռներեցության բնագավառում կոռուպցիան, դրա ձևերը, դրսևորումները և տարածվածության աստիճանը,

3. սահմանել և բնութագրել քաղաքական և իրավական տեսանկյունից կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ ռազմավարությունը, ինչպես նաև, այդ խնդրում մասնավոր հատվածի առավել հեռանկարային մոտեցումները:

Ներկայացվող նյութը նպատակ ունի վերլուծել և ամփոփել ուսումնասիրության հետևյալ հիմնական արդյունքները.

#### 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ

- Կոռուպցիան և կաշառակերությունը հանրային և մասնավոր հատվածում երկրում փոքր և միջին ձեռներեցության զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներից են:
- Հետազոտված ՓՄՁ-ների 49%-ը հայտարարում է, որ իրենք՝ որպես զոհ կամ որպես ակնատես, անձնապես առնչվել են կոռուպցիայի երևույթին:

#### 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄՔԸ

- Կաշառքի ամենատարածված ձևերն են՝ դրամը, անձնական կապերը և նվիրատվությունը:
- «Ամենակոռումպացված» կառույցներն են՝ տեսչական և տեղական ինքնակառավարման մարմինները:
- Կաշառք պահանջելու հաճախականությունը՝ դեպքերի 50-100%-ը:

#### 3. ԿԱՇԱՌՔԻ ԱՐԺԵՔԸ

- Կաշառքը տրվում է հիմնականում հանրային մրցույթների և վարկերի տրամադրման ժամանակ:
- Պահանջվող կաշառքի չափը. հանրային մրցույթում այն կազմում է պայմանագրի արժեքի 6-10%-ը, վարկերի տրամադրման դեպքում՝ վարկի գումարի 10-15%-ը:
- Անվտանգություն. հետազոտված ՓՄՁ-ների 78%-ը չեն վստահում երկրի իրավական համակարգին: Հիմնական պատճառներն են՝

օրենքների երկիմաստությունն ու դրանց կամայական կիրառումը:

- Թափանցիկության պակասը կապված է հանրային ծառայությունների մատուցման ձևերի և պետական պաշտոնյաների վարքագծի հետ: Հետազոտված ՓՄՁ-ների մեծամասնությունը լավատեղյակ չեն պետական պաշտոնյաների վարքագծի կանոններին եւ պետական պաշտոնյաների որոշում կայացնելու չափանիշներին, ինչպես նաեւ տեղյակ չեն, թե օրենքի համաձայն ով պետք է իրականում ենթարկվի պատժի:

## **II. Մասնավոր ձեռներեցության զարգացման հիմնական արգելքները**

Համաձայն հարցման արդյունքների՝ Հայաստանում գործարարության զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրները կարելի է դասակարգել երկու խմբով: Առաջին խմբում ընդհանուր օրենսդրական, վարչարարական և ֆինանսական խոչընդոտներն են: Երկրորդ խմբի խնդիրները առնչվում են ձեռնարկությունների ամենօրյա մենեջմենթի հետ (աղյուսակ 1):

Առաջին խումբը ներառում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ՓՄՁ կարգավորող օրենսդրությունը, հարկային դաշտի անկայունությունը և դրանից բխող բարդությունները, դժվարություններն ու չարաշահումները, ֆինանսական և բանկային համակարգի հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև տնտեսական գործընթացում կառավարության ունեցած դերն ու մասնակցության աստիճանը: Այս խումբը ընդգրկում է նաև կոռուպցիայի և վարչարարության հետ կապված խնդիրները: Երկրորդ խմբում ներառված են դատական և բյուրոկրատական հիմնախնդիրները: Այս խմբի մեջ կարելի է ընդգրկել նաև օրենքների մեկնաբանության և կիրարկման հետ առնչվող հիմնախնդիրները:

**ԱՂՅՈՒՍԱԿ 1: ՄԱՍՆԱՎՈՐ ՉԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ**

Արգելքի նկարագրությունը	% *	Դասը
ՓՄՁ կարգավորող օրենսդրության անկայունությունը	91.3	1
Բարդ և զարգացման առումով ոչ նպաստավոր հարկային համակարգն ու վարչարարությունը	90.4	1
Կոռուպցիան և կաշառակերությունը հանրային հատվածում	90,4	1
Ծարկերի բարձր տոկոսադրույքները	89.4	1
Արտոնագրերի ու թույլտվությունների ստացման բարդ, աշխատատար ու ժամանակատար գործընթացները	89.4	1
Խեփականության իրավունքի երաշխավորված չլինելը	84.6	2
ՓՄՁ-ներին պետական անբավարար աջակցությունը	83.6	2
Ծարկերի դժվար մատչելիությունը	81.7	2
Անկանխատեսելի դատական համակարգը (օրենքների երկիմաստությունը, կիրարկման անկատարությունը և այլն )	78.8	2
Կոռուպցիան և կաշառակերությունը ձեռնարկությունների միջև (մեծ ձեռնարկություն-մատակարար-գնորդ-հաճախորդ)	77.9	2
Ձեռնարկության ստեղծման բարդ կանոնները և վարչարարությունը	71.7	2

«Որո՞նք են ձեռներեցության զարգացման հիմնական արգելքները» հարցին ի պատասխան գործարարների մեծամասնությունը առաջնությունը տվել է «ՓՄՁ կարգավորող օրենսդրության անկայունությանը» (91.3%): «Բարդ և զարգացման առումով ոչ նպաստավոր հարկային համակարգն ու վարչարարությունը» և «Կոռուպցիան և կաշառակերությունը հանրային հատվածում» երկրորդ տեղում են (90.4%): Տվյալները, ինչևիցե, վկայում են, որ կոռուպցիան առաջին դասի խոչընդոտների շարքում է:

Այսպիսով, ստացված արդյունքները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունը. ըստ ՓՄՁ ներկայացուցիչների՝ կոռուպցիան

\* Տոկոսների գումարը գերազանցում է 100-ը, քանի որ հարցման մասնակիցները հաճախ նշել են մեկից ավելի պատասխաններ:

հանրային ծառայողների շրջանում խիստ բացասաբար է անդրադառնում ոլորտի զարգացման վրա և ուղղակիորեն կապված է գործող օրենսդրության հետ:

### III. Կոռուպցիայի դրսևորումները ՓՄՉ ոլորտում

#### 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հարցման արդյունքները թույլ են տալիս գնահատել կոռուպցիայի տարածվածության աստիճանը հանրային ծառայությունների հիմնական ոլորտներում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2: ԿԱՇԱՌՔԻ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՊՔԵՐԸ (%)

Գործարքի նկարագրությունը	Միշտ(%)	Հաճախ(%)	Երբեմն(%)	Երբեք(%)
Սեփականության իրավունքի գրանցում	33.6	20.2	20.2	13.5
Շինարարության թույլտվություն	31.7	32.0	17.3	9.6
Մաքսագերծում	30.8	32.7	20.2	8.7
Հանրային մրցույթներ	29.8	33.6	10.6	11.5
Վարկային գործընթաց	26.9	23.1	19.2	22.1
Հարկային տույժերի կրճատում	23.1	36.5	18.3	9.6
Էլեկտրականության, ջրագծի, հեռախոսագծի անցկացում	21.1	27.9	29.8	8.6
Դատական գործընթացի արագացում	20.2	27.9	18.3	19.2
Համայնքի թույլտվության ստացում	17.3	29.8	35.6	6.7
Ձեռնարկության գրանցում	11.5	24.0	37.5	15.4
Այլ ծառայություններ՝ Հրշեջ ծառայություն Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն	97.1 97.1	2.9 2.9	- -	- -

Աղյուսակ 2-ի տվյալները պատկերացում են տալիս հանրային ծառայությունների տարբեր ոլորտներում կոռուպցիայի տարածվա-

ծության աստիճանի մասին և թույլ են տալիս հանգել որոշ եզրակացությունների.

- Սեփականության իրավունքի գրանցումը կոռուպցիայի տեսանկյունից բավականին առաջ է անցնում մյուս ծառայություններից: Հարցման մասնակիցների 33.6%-ը հայտնում է, որ սեփականության իրավունքը գրանցելիս անհնար է խուսափել ոչ պաշտոնական վճարումներից:
- Կոռուպցիոն պրակտիկան տարածվում է նաև կառուցման թույլտվության ձևակերպման վրա, ուր կաշառք տալը համարվում է բավականին հաճախ հանդիպող երևույթ: Սակայն, դրա տարածվածության ցուցանիշը փոքր ինչ ցածր է (31.7%) սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշից:
- Ապրանքների ներկրումն ու արտահանումը կոռուպցիոն ռիսկի տեսանկյունից ցուցակում զբաղեցնում է երրորդ տեղը: Հարցման մասնակիցներից յուրաքանչյուր երրորդը (30.8%) խոստովանում է, որ մաքսատուրք վճարելիս ստիպված է եղել կաշառք տալ:
- Պետական պատվերի պայմանագրերը հաջորդն են ցուցակում: Հարցման մասնակիցների մոտ մեկ երրորդը (29.8%) վստահ է, որ անկախ պայմանագրի տեսակից և գումարի չափից, գործարարը ստիպված է ոչ պաշտոնական վճարումներ կատարել՝ վստահ լինելու համար, որ պայմանագիրը կկնքվի:
- Գրեթե նույնն է վիճակը վարկերի ստացման դեպքում: Հարցման մասնակիցների 26.9%-ը վստահ է, որ առանց հավելյալ վճարների վարկ ստանալն անհնար է:
- Հարկային տույժերի կրճատման նպատակով կաշառքը ցուցակում հաջորդն է: Հարցման մասնակիցների 36.5%-ը կաշառք է վճարում հարկային տույժերի գումարները զեղչով վճարելու համար:
- Այս սանդղակի ստորին մասում են գտնվում էլեկտրականության, հեռախոսագծի, ջրագծի անցկացման ծառայությունները (21.1%) և համայնքի (17.3%) թույլտվությունը:
- Համեմատաբար փոքր է հարցման այն մասնակիցների բաժինը (20.2%), որոնց կարծիքով դատարաններում դատական գործընթացի արագացման համար ոչ պաշտոնական վճարները պարտադիր են:
- Յուրաքանչյուր ամենավերջինը ձեռնարկության պետական գրանցման ծառայությունն է: Հարցման մասնակիցների միայն 11.5%-ն է ձեռնարկության գրանցման համար կաշառք վճարել: Անկասկած, դա գործընթացի պարզեցման շնորհիվ ստացված արդյունք է:

- Բայց ամենամտահոգիչը այն տվյալներն են, որոնք վերաբերում են հրշեջ և սանիտարա-հիգիենիկ ծառայություններին: Հարցման մասնակիցների բացարձակ մեծամասնությունը (97%) գտնում է, որ այս ծառայությունների հետ առնչվելիս կաշառքից խուսափելը գործնականում անհնար է:

Կոռուպցիոն բնույթի դրսևորումները կարող են տարբերվել՝ կախված մատուցվող ծառայությունների տեսակից: Բացի նյութական կաշառքից՝ դրամ, նվեր կամ ծառայություն, դրանք կարող են այս կամ այլ կերպ կապված լինել իշխանության կամ պաշտոնական դիրքի չարաշահման հետ: Սակայն, հարցման մասնակիցների մեծամասնությունը մատնանշում է, որ դրամը կաշառքի ամենատարածված ձևն է:

## 2. ԿՈՌՈՒՊՅՑԻՈՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


Ակնհայտ է, որ կոռուպցիայի երևույթի գոյությունը պայմանավորված է իր գործնական արդյունավետությամբ. այսինքն՝ ինչքան ավելի դյուրին ու արագ կարելի է հաղթահարել վարչական արգելքներն ու սահմանափակումները կաշառքի, ծառայություն մատուցելու և/կամ նվերի շնորհիվ, այնքան ավելի է անձը պատրաստ ներքաշվելու նման փոխհարաբերությունների մեջ, քանի որ արդյունքում կխնայվեն և՛ ժամանակը, և՛ նյարդերը, և՛ միջոցները: Այսպիսով, երկու հավասարապես շահագրգիռ կողմերի միջև իրականացվում է կոռուպցիոն գործարք:

Հարցման մասնակիցների 53%-ը այն կարծիքին է, որ տարբեր տեսակի գործարքները՝ պետպատվերի պայմանագիրը, տենդերում հաղթող ճանաչվելը և այլն, մեծ մասամբ իրականացվում են կաշառքի շնորհիվ, մինչդեռ միայն 8.6%-ն է գտնում, որ կոռուպցիայի վրա հիմնված նման գործարքների բաժինը չնչին է:

Նկար 1-ում բերված է կոռուպցիոն փոխհարաբերություններ նախաձեռնողների հարաբերակցությունը:


Հատկանշական է, որ հարցման յուրաքանչյուր չորս մասնակիցներից մեկը գործարարին է ճանաչում որպես կոռուպցիոն փոխհարաբերությունների նախաձեռնող: Նման դիրքորոշումը կարելի է մեկնաբանել որպես գործարարի և պետական պաշտոնյայի միջև փոխհարաբերությունների առօրյա պրակտիկա:

ՆԿԱՐ 1: ԿՈՈՌՈՊՑԻՈՆ ՓՈՒՆՎԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՆՆՈՂՆԵՐԸ



Մինչդեռ կաշառք տալը ամենակին չի նշանակում, որ պայմանավորվածությունը չի խախտվի: Հարցման մասնակից գործարարների ճնշող մեծամասնությունը՝ 62.5%, լիովին վստահություն չունի կաշառքով ձեռք բերված պայմանավորվածության արդյունքի նկատմամբ (նկար 2): Իսկ 13.5%-ն անձնական փորձ ունի, երբ կաշառքը տրվել է, սակայն պաշտոնյան չի կատարել իր խոստումը:


ՆԿԱՐ 2: ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԿՈՈՌՈՊՑԻՈՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ



Օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում (1-5 տարի ազատազրկում) կաշառք տվող անձի և կաշառք պահանջող պաշտոնյայի համար: Հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքը ընդհանուր առմամբ համընկնում է գործող օրենսդրության համապատասխան դրույթների հետ: Հարցման մասնակիցների 25.0%-ը գտնում է, որ և՛ կաշառք տվողը, և՛ կաշառք վերցնողը պետք է

պատասխանատվության ենթարկվեն: 41.3%-ը գտնում է, որ պատասխանատվության պետք է ենթարկվի միայն կաշառք պահանջողը, և միայն 7.7%-ն է գտնում, որ կաշառք առաջարկողը պետք է օրենքով պատժվի: Իսկ 25.0%-ի կարծիքով վճիռը պետք է բխի տվյալ դեպքի հանգամանքներից:

ՆԿԱՐ 3: ԿՈՌՈՊՏԻՈՆ ԴԵՊԵՐՏՐՈՄ ՍԵՂԱՎՈՐ ԿՈՂՄԸ



Հարցման մասնակից գործարարներից ոչ մեկը չի ընդունում այն տեսակետը, որ ո՛չ կաշառք պահանջողը և ո՛չ էլ կաշառք տվողը չպետք է պատժվեն:

#### IV. Կոռուպցիային նպաստող հիմնական պայմանները

##### 1. ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ


Հրապարակայնությունը այն առաջնային միջոցներից է, որը կարող է կրճատել կոռուպցիան հանրային ոլորտում: Ինչքան ավելի թափանցիկ է համապատասխան կառույցների գործունեությունը, և ինչքան ավելի բարձր է դրա վերաբերյալ հանրության իրազեկության աստիճանը, այնքան ավելի մեծ է այդ կառույցների նկատմամբ հանրային վերահսկողության հնարավորությունը, որն իր հերթին ասահմանափակում է կոռուպցիայի տարածումը:

Հետազոտության տվյալները միանշանակ վկայում են հանրային վարչակազմի գործունեության վերաբերյալ փոքր և միջին գործարար խավի իրազեկության ցածր աստիճանը (նկարներ 4, 5): Գործարարների մեծ մասը գտնում է, որ վարչական գործողությունների ընթացքը բավարար չափով թափանցիկ չէ: Այս փաստն, ինքնին, լուրջ հիմք է ծառայում համապատասխան

կառույցների գործունեության նկատմամբ վստահության բացակայության և կոռուպցիայի մեջ կասկածելու համար:

Հարցման մասնակիցների մոտ մեկ երրորդը (28.8%) գտնում է, որ վարչական կառույցները չունեն որոշումների կայացման պաշտոնապես հաստատված չափանիշներ և կանոններ, և որ պետական պաշտոնյաները ենթակա չեն հակակոռուպցիոն վերահսկողության: Մեկ ուրիշ, բավականին մեծ խումբ՝ 38.4%, որոշ չափով տեղյակ է նման չափանիշների մասին, սակայն տեղեկատվությունն ամբողջական չէ, իսկ 5.8%-ը տեղյակ չէ, թե որտեղից կամ ինչպես գտնի նման տեղեկատվություն: Հակառակ դրան՝ ոչ պաշտոնական վճարումներ կատարելու կարգի մասին տեղյակ են բոլորը, ուստի որոշման կայացման կանոններ ու չափանիշներ կիրառելու կարիք չի զգացվում (նկար 4):

ՆԿԱՐ 4: ՀԱՆՐԱՌԾՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




Հարցմանը մասնակցած գործարարների կարծիքով հանրային ծառայությունների համակարգին հատուկ են վերահսկողության ցածր մակարդակը, հանուն անձնական շահի օրինական կանոնների խախտումը կամ շրջանցումը (նկար 5):

Գործարարների մի մեծ խումբ (44.2%) փաստում է, որ պաշտոնապես հրապարակված տուրքերից և վճարներից բացի՝ մատուցվող ծառայությունների դիմաց անհրաժեշտ է ոչ պաշտոնական վճարները կատարել: Միևնույն ժամանակ, 32.7%-ը հայտնում է, որ պաշտոնական վճարների մասին նախապես չեն տեղեկացվում, ուստի դրանք որոշ դեպքերում կամայական են:

Հարցման մասնակիցների մեկ երրորդը համոզված է, իսկ 39.4%-ը ենթադրում է, որ յուրաքանչյուր հանրային կառույց կոռուպցիային դիմակայելու համար պետք է մշակի իր գործունեության թափանցիկ և հստակ ձևակերպված կանոնակարգը եւ ընթացակարգը: Յավոք, նույնիսկ նման կանոնների առկայության դեպքում դրանք չեն կիրառվում: Պատճառը վերահսկողության պակասն է, համապատասխան պատժամիջոցներ չկիրառելը և այլն:

ՆԿԱՐ 5: ՏԵՂԵԿԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




Հարցման մասնակիցների համոզմամբ կոռուպցիան, կառավարման գործընթացի թափանցիկության բացակայության պայմաններում վերածվել է հանրային հարաբերությունները կարգավորող գործոնի:

## 2. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆԴԵՊ

Դատական համակարգն այն կառույցն է, որը պետք է պայքարի կոռուպցիայի բոլոր դրսևորումների դեմ: Մինչդեռ ոսումնասիրության արդյունքները վկայում են դատական համակարգի նկատմամբ վստահության չափազանց ցածր մակարդակի մասին (նկար 6):

Վստահության այսպիսի ցածր մակարդակի պատճառը, համաձայն հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքի, իրականում դատական համակարգի ցածր արդյունավետությունն ու կարծրությունն է:

## ՆԿԱՐ 6: ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆԴԵՊ



- Հարցման մասնակից գործարարների 83.6%-ը չի վստահում դատական համակարգին՝ իրավական դաշտի երկհմաստության, կողմնակալության և կիրարկման թերի մեխանիզմների պատճառով: Հարցման մասնակիցների կարծիքով գործարարությունը կարգավորող օրենքները հակասական են, իսկ դրանց կիրառումը՝ կամայական:
- Հարցման մասնակից գործարարների 32.7%-ը այն կարծիքին է, որ եթե կա օրենքի խախտում, ապա վերահսկման համար պատասխանատու պաշտոնյաները կամ չեն միջամտում ընդհանրապես, կամ արդյունավետ չեն գործում: Նույնը կարելի է ասել նաև պատժամիջոցների կիրառման մասին:
- Հարցման մասնակիցների 20.2%-ի կարծիքը այն է, որ նոր ընդունված օրենքները միտում ունեն կարգավորելու մասնավոր ձեռնարկատիրության ոլորտը, սակայն, փաստորեն, չեն նպաստում գործարարության զարգացմանը:


## V. Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունը

### 1. ԔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հանրային ծառայությունների մատուցման որակի բարձրացման և այդ ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համար անհրաժեշտ նախապայման է հանդիսանում հանրային կառույցների գործունեության նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմների գոյությունը: Հարցման արդյունքում ստացված տվյալները վկայում են նման մեխանիզմների և/կամ դրանց նկատմամբ վստահության բացակայության մասին:

Հարցման մասնակիցների զգալի մասը (26.9%) բողոք է ներկայացրել հանրային ծառայությունների ցածր որակի կապակցությամբ, սակայն մեծամասնությունը կասկածի տակ է առնում այդ գործողության արդյունավետությունը (նկար 7): Բողոք չներկայացրած հարցման մասնակիցների միայն 6,7%-ն է, որ տեղյակ չէ, թե ուր և ինչպես պետք է բողոք ներկայացնել: Յածրորակ ծառայություններին որևէ կերպ չարձագանքելու հիմնական պատճառը հետևյալ մտածելակերպն է. «Բողոքելով ես ոչնչի չեմ հասնի» (32.7%) կամ «Բողոքելով բավականին ժամանակ կկորցնեմ, ինչը ես ինձ թույլ տալ չեմ կարող» (26.9%): Համեմատաբար մեծ է մարդկանց այն խումբը, ովքեր հրաժարվում են բողոք ներկայացնելուց՝ համոզված լինելով, որ կպարտվեն, կամ վախենում են, որ նման քայլը բացասական հետևանքներ կունենա (9.6%):

ՆԿԱՐ 7: ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱԾՐ ՈՐԱԿԻ ԴԵՄ ԲՈՂՈՔ ԶՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ



Հանրային հատվածում բացասական (նույն թվում նաև կոռուպցիոն բնույթի) երևույթներին դիմակայելու մեխանիզմների մշակումն ու կիրառումը չեն կարող իրականացվել միմիայն քաղաքական կամքի կամ կառավարական որոշումների միջոցով: Հանրային ծառայությունների վերահսկողության պարզ ու թափանցիկ մեխանիզմ ներդնելու համար լուրջ ջանքեր կպահանջվեն ինչպես պետության, այնպես էլ գործարար համայնքի կողմից՝ ժխտողական մտածելակերպն ու վարքը արմատապես փոխելու և ծառայությունների մատուցման կարգը օրենքի պահանջներին լիովին համապատասխանեցնելու համար:

Համաձայն հարցման մասնակիցների կարծիքի՝ հանրային ծառայությունների որակը բարելավելու և ոչ պաշտոնական վճարումների սողանքները կրճատելու համար կառավարությունը ամենից առաջ պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի վարչական

գործընթացների պարզեցման ու արագացման, ամբողջական ու ճշգրիտ տեղեկատվության տրամադրման, պաշտոնյաների համար կրթական և ուսուցողական դասընթացների կազմակերպման վրա:

Գործարարների կարծիքով պաշտոնյաների հետ փոխ-հարաբերությունները կբարելավվեն, եթե մշակվեն և ներդրվեն պաշտոնյաների թափանցիկ գործելակերպի կանոնները ու վարքի, այդ թվում նաև հաճախորդների նկատմամբ «քաղաքակիրթ ու հարգալից վերաբերմունքի» նորմերը (աղյուսակ 3):

ԱՂՅՈՒՍԱԿ 3: ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼԱԿՍԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ (%)

Գործընթացի նկարագիրը	Պարտադիր	Կարևոր	Երկրորդական
Պաշտոնյաների թափանցիկ գործելակերպի կանոնների և վարքի նորմերի մշակում	55.8	16.3	1.9
Ամբողջական ու ճշգրիտ տեղեկատվության տրամադրում	52.9	23.1	1.0
Վարչական գործընթացների պարզեցում և արագացում	48.1	24.0	2.9
Պաշտոնյաների համար կրթական և ուսուցողական դասընթացների կազմակերպում	44.2	26.0	1.0
Կառավարական և հանրային կառույցներում, պետական կազմակերպություններում կոռուպցիոն ղեպքերի և դրանց մասնակիցների բացահայտում	35.6	18.3	17.3
Արդյունավետ, անկաշառ վերահսկող մարմնի ստեղծում և կոռուպցիայի դեմ պատժամիջոցների մշակում ու կիրառում	30.8	16.3	21.1
Հանրային կառույցների գործունեության էթիկայի սկզբունքների մշակում և կիրառում	25.0	38.5	8.6
Չեռնրեցությունը կարգավորող օրենքների մշակման գործընթացի մեջ գործարար միավորումների ներգրավում	20.2	43.2	6.7

- Պետական պաշտոնյաների թափանցիկ գործելակերպի կանոնների և էթիկայի սկզբունքների մշակումը, ամբողջական ու ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը, վարչական գործընթացների պարզեցումն ու արագացումը հանդիսանում են

այն կարևորագույն խնդիրները, որոնց վրա, ըստ հարցման մասնակիցների կարծիքի, կառավարությունը պետք է կենտրոնացնի իր ուշադրությունն ու կարողությունը՝ կոռուպցիան կրճատելու համար (48.1% – 55.8%):

- Ոչ պակաս կարևոր խնդիրների շարքում են հայտնվել պաշտոնյաների համար կրթական և ուսուցողական դասընթացների կազմակերպումը, կառավարական, հանրային կառույցներում, պետական կազմակերպություններում կոռուպցիոն դեպքերի և դրանց մասնակիցների բացահայտումը, արդյունավետ, անկաշառ վերահսկող մարմնի ստեղծումը՝ կոռուպցիոն դեպքերի և դրանց մասնակիցների բացահայտման և համապատասխան պատժամիջոցների մշակման ու կիրառման համար (30.8 %–44.2%):
- Պետական կառույցներում գործունեության էթիկայի սկզբունքների մշակումն ու կիրառումը, ինչպես նաև ձեռներեցությունը կարգավորող օրենքների մշակման գործընթացի մեջ գործարար միավորումների ներգրավումը ևս մատնանշված են որպես կոռուպցիայի դեմ պայքարի հնարավոր ուղղություններ (20.2 %–25.0%):

## 2. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ինչպես վերը նշված է, վստահությունը դեպի դատական համակարգը մեր երկրում ծայրաստիճան ցածր է: Հարցման տասը մասնակիցներից ութը չեն վստահում համակարգին (նկար 6): Յուրաքանչյուր հինգերորդը նշում է, որ ձեռներեցությունը կարգավորող օրենսդրությունն ու պետական քաղաքականությունը միմիայն ֆինանսական ճնշում են գործադրում և ամենևին էլ չեն խթանում բիզնեսի զարգացումը: Չնայած հարցվողների միայն կեսն է որոշակի արդյունք ակնկալում հակակոռուպցիոն օրենքների և վարչարարությունը կարգավորող կանոնների և սանկցիաների հետևողական կիրառումից, այնուհանդերձ պետական պաշտոնյաների գործելակերպի հստակ կանոնակարգումը և հակակոռուպցիոն օրենքների և սանկցիաների հետևողական կիրառումը կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներից են:

Նման մոտեցման դեպքում կարելի է ակնկալել հետևյալ արդյունքը. մի կողմից կարագանան վարչական գործընթացները, և կբարելավվի հանրային ծառայությունների որակը, ինչն իր հերթին կխթանի ձեռներեցության զարգացումը և զգալի չափով կբարելավի գործարար միջավայրը: Մյուս կողմից գործարարներն իրենք

հանրային կառույցների հետ շփումների ժամանակ հակված կլինեն կիրառելու էթիկայի սկզբունքներն ու կանոնները (աղյուսակ 4):

Պաշտոնյաների վարքագծի հստակ ձևակերպված կանոնների և հակակոռուպցիոն օրենքների ու սանկցիաների հետևողական կիրառումը կփոխեն գործարարների և պետական պաշտոնյաների միջև փոխհարաբերությունների բնույթը և որպես հետևանք՝ թույլ կտան գործարարներին հրաժարվել վարչական խոչընդոտների հաղթահարման արատավոր եղանակից:


ԱՂՅՈՒՍԱԿ 4: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՆՔՆԵՐԸ (%)

Աղյուսակի նկարագիրը	Իրատեսական է
Կճևավորվի ձեռնարկատիրությանը նպաստող միջավայր, և կբարձրանա ՓՄՁ դերը Հայաստանի տնտեսության մեջ	28.8
Կբարձրանա պետական պաշտոնյաների անձնական պատասխանատվության աստիճանը, կբարձրանա մատուցվող ծառայությունների որակը	27.9
Կբարձրանա հանրային կառույցների՝ «պետական արհեստավարժ մարմինների» վարկանիշը և կավելանա վստահությունը դրանց նկատմամբ	21.2
Գործարարների և պետական պաշտոնյաների միջև կհաստատվեն բարոյական նորմերին համահունչ փոխհարաբերություններ	10.6
Ավելի արագ ու արդյունավետ կընթանան վարչական գործընթացները	9.6

### 3. ՍԱՍՆԱՎՈՐ ՁԵՆՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԵՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ

Հակակոռուպցիոն օրենքների և սանկցիաների ընդունումն ու կիրառումը ենթադրում է ղեկավար մարմինների դերի հստակեցում: Գոյություն ունի նաև մի այլ կարծիք կոռուպցիային հակազդող չեզոք, ոչ կառավարական կազմակերպության հիմնադրման վերաբերյալ: Նման կառույցի խնդիրը կլինի հաստատված կոռուպցիոն դեպքերի և դրանց մասնակից պաշտոնյաների անունների հրապարակումը մամուլում՝ առանց տեղեկատվության աղբյուրը նշելու: Հարցման մասնակից գործարարներից շատերը նշում են, որ իրենք կհամագործակցեն նման կառույցի հետ, եթե ստիպված լինեն կաշառք տալ: Նրանք պատրաստ են այդ քայլին, եթե երաշխավորվի իրենց անանուն մնալը: Սակայն նույնիսկ այս պայմանով ավելի մեծ է այն անձանց քանակը, որոնք չեն գնա այդ քայլին՝ զգուշանալով իրենց համար բացասական հետևանքներից (նկար 8):

ՆԿԱՐ 8: ԿԱՇԱՈՔԻ ՉԱՓԻ ԵՎ ԿԱՇԱՈՔ ՎԵՐՅՆՈՂԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ



4. ԳՈՐԾԱՐԱՐ ԱՍՈՑԻԱՅԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Ներկայումս անտեսվում է տարբեր գործարար ասոցիացիաներին անդամակցելու միջոցով կոռուպցիային հակազդելու հնարավորությունը: Գործարար ասոցիացիաներին անդամակցելու փաստը նշել է հարցման մասակիցների 22.1%-ը: Անդամակցությունը գործարար կազմակերպություններին տնտեսության տարբեր ճյուղերում տարբեր է. արդյունաբերություն՝ 47,8%, ծառայություններ՝ 34.8%, շինարարություն՝ 8.7% և գյուղատնտեսություն՝ 8,7%:

Չնայած հարցման մասնակից գործարարների 80%-ը հայտնում է, որ իրենք հետաքրքրված են հակակոռուպցիոն պայքարի հետագա զարգացմամբ և պատրաստ են օժանդակել դրան, սովորաբար վկայում են, որ նրանք հակակոռուպցիոն միջոցառումների մշակման և նախաձեռնությունների իրականացման գործում կգերադասեն մնալ պասիվ դիրքում: Նույնիսկ պատրաստ լինելով աջակցելու կոռուպցիայի դեմ մղվող պայքարին՝ գործարարների մեծամասնությունը գերադասում է գործել միանձնյա, այլ ոչ թե գործարար միավորումների շարքերում, և միայն այն պայմանով, որ իրենց անանուն մնալը երաշխավորված լինի:

## VI. Հիմնական դիտարկումներն ու եզրակացությունները

Կոռուպցիայի դեմ պայքարում ՓՄՉ-ն պետք է հաղթահարի որոշակի խոչընդոտներ՝ վարչարարության թափանցիկ չլինելը, դատաիրավական համակարգի անկատարությունը և բազմաթիվ այլ, ավելի ընդհանուր բնույթի հիմնախնդիրներ, որոնք կապված են երկրի տնտեսության զարգացման հետ:

Ընկերությունները, երբ նրանցից կաշառք է պահանջվում, հայտնվում են բարդ երկրնտրանքի առջև:

- Նույնիսկ երբ կոռուպցիոն դեպքը բացահայտվում է, և պետական պաշտոնյայի դեմ քրեական գործ է հարուցվում, վճարված գումարները ետ չեն վերադարձվում:
- Երբեմն ընկերությունը կարող է տեղյակ չլինել, որ այս կամ այն ծառայությունների դիմաց վճարումները եղել են ի շահ պետական պաշտոնյայի և կաշառք են համարվում:
- Գործարար ծրագրի մեջ արդեն իսկ արված լայնածավալ ներդրումները հետագայում խիստ նվազեցնում են ընկերությունների կաշառքի պահանջին դիմագրավելու կարողությունը:
- Կաշառքի պահանջը հաճախ կրում է անուղղակի կամ ոչ բացահայտ բնույթ, երբեմն էլ փոխանցվում է միջնորդների միջոցով: Ընկերություններն էլ սովորաբար առաջնորդվում են այն համոզմամբ, թե առանց կաշառքի նախատեսված ոչ մի գործարք չի իրականանա, կամ պաշտոնական գործընթացները չափազանց երկարատև ու բարդ կլինեն: Նման դեպքերում ընկերությունները դժվարությամբ են հայտնում կաշառքի պահանջի մասին՝ վախենալով, որ կմեղադրվեն զրպարտության մեջ:
- Գործարքի վաղ փուլում կաշառքի պահանջի դեպքում ընկերությունները ցանկություն ունեն և պարտավոր են առաջնորդվել գործի շահով: Այդ իսկ պատճառով պետական մարմինների օրինական միջամտությունը՝ ուղղված կաշառք պահանջողի դեմ, պետք է հնարավորինս հաշվի առնի ընկերության կոմերցիոն գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը:
- Առանց բացահայտ պետական հովանավորության ընկերությունների համար առանձնապես դժվար է դիմակայել բարձրաստիճան կոռուպցիային:
- Ընկերության կողմից հանդես եկող գործակալը կարող է ներկայացվող հաշվում ունենալ «կոմիսիոն» կամ «հոնորար»

կետերը, որոնք նախատեսված են որպես մատուցված ծառայության դիմաց օրինական վճար, կամ, գուցե, որպես կաշառք տրված գումարների «փոխհատուցում»: Հաշվապահական հաշվառումը, նախատեսված լինելով ապահովել թափանցիկությունը, ոչ պաշտոնական վճարների գրանցման հնարավորություն չի ընձեռում, և գրանցումը կատարվում է միայն փաստացի վճարման դեպքում: Վճարումը պետք է արձանագրվի որպես «կոմիսիոն» կամ «հոնորար»: Հետագայում ընկերությունը ոչ միշտ է տեղյակ, թե արդյո՞ք վճարումն օրինական էր (օր.՝ մրցույթի փաստաթղթերի ձեռքբերման վճար), թե՞ այն արվել է պաշտոնյայի պահանջով՝ նպատակովոր որոշման ակնկալիքով (օր.՝ մրցակիցների ցանկում ընդգրկվելու համար և այլն):

- Կոռուպցիոն գործընթացների բազմազանության պատճառով միշտ չէ, որ կարելի է միանշանակ արձանագրել հակակոռուպցիոն օրենքները խախտելու փաստը: Նման անորոշությունը բավականին վատ է անդրադառնում գործարարության վրա և կարող է խաթարել առողջ մրցակցությունը: Ընկերությունները պետք է արագ և հավաստի տեղեկատվություն ստանան տվյալ գործարքի օրինականության վերաբերյալ: Նման տեղեկատվությունը պետք է ստացվի պաշտոնական, բայց ոչ պատժիչ կառույցներից՝ պատժամիջոցների կիրառման հնարավորության դեպքում ընկերության գործարքի հետ կապված իրական շահերը պաշտպանելու նպատակով:

Կոռուպցիոն դեպքի արձանագրումը չպետք է սահմանափակվի միայն պատժամիջոցների կիրառմամբ կամ կաշառակերության դեմ կիրառվող այլ միջոցներով: Ցանկացած գործողություն պետք է հասցեագրված լինի կոռուպցիոն փոխհարաբերությանը մասնակից երկու կողմերին միաժամանակ՝ բացահայտելով երևույթը նույնիսկ առանց իրավական առումով անհերքելի ապացույցների:

- Հայաստանում գործարարությանը առնչվող ներկայիս խնդիրները գործարարները բաժանում են երկու հիմնական դասի: Առաջին և ամենակարևոր դասում ընդգրկված են պետական և օրենսդրական մակարդակի դժվարությունները, ինչպիսիք են հարկային պարտավորությունների բարդ համակարգը և դրանից բխող խոչընդոտներն ու չարաշահումները, երկրի ֆինանսական և բանկային համակարգի հետ առնչվող խնդիրները, զգալի չափով նաև տնտեսական գործընթացներում կառավարության դերն ու մասնակցությունը: Հաջորդ դասն ընդգրկում է տնտեսվարող

սուբյեկտների առօրյա գործունեության հետ առնչվող հիմնախնդիրները՝ համատարած կոռուպցիան և վարչարարական խոչընդոտները: Այս ցանկը կարելի է համալրել նաև ոլորտը կարգավորող օրենսդրության և առանձին օրենքների կիրառման ու մեկնաբանության հետ կապված խնդիրներով:

- Պետական պաշտոնյաների գործունեության վերաբերյալ ձեռներեցների իրազեկության աստիճանը խիստ ցածր է: Հարցման մասնակիցների մոտ մեկ երրորդը այն կարծիքին է, որ վարչարարական գործընթացները կարգավորող որոշումների կայացման կանոնների և վարչարարական գործընթացների գնահատման չափանիշների վերաբերյալ տեղեկատվությունը իսպառ բացակայում է:
- Կոռուպցիայի հետ առավել հաճախ առնչվող դեպքերը ներառում են հանրային ծառայությունների ոլորտը, մաքսային պաշտոնյաների հետ շփումները, թույլտվությունների և արտոնագրերի ստացումը:
- Ընդհանուր առմամբ վերը նշված կոռուպցիոն բնույթի դեպքերի մույնացումը հիմնվում է անձնական փորձի վրա:

Բոլոր կոռուպցիոն դեպքերի հիմքում ընկած է գործող օրենսդրությունը և վարչարարական համակարգը: Օրենքները հստակ և միանշանակ չեն և միտումնավոր կերպով շարադրված են այնպես, որ երկիմաստ մեկնաբանության հնարավորություն են տալիս: Շուկայում մենաշնորհային դիրք գրավող ընկերությունները մշակում և նպաստում են այնպիսի օրենքների ընդունմանը, որոնք չեն խթանում հավասար մրցակցությունը և ձեռնտու են միայն շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերություններին: Կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ են հստակ ձևակերպված օրենքներ, լուրջ և հետևողական միջոցառումներ: Կաշառքի արդյունավետությունը, վերահսկման բացակայությունը և անարդյունավետ դատաիրավական համակարգը կոռուպցիայի տարածման հիմնական խթանիչներն են:

- Հարցման մասնակիցների 78.1%-ը վստահություն չի ընծայում դատական համակարգին: Այս ցածր գնահատականի պատճառը դատական համակարգի կառույցների անարդյունավետությունն ու գործունեության կարծր մեթոդներն են:
- Համաձայն հարցման մասնակից գործարարների՝ հանրային ծառայությունների համակարգը բնութագրվում է վերահսկման ցածր մակարդակով, իրավական նորմերի և դրույթների խախտման կամ խաբեության միջոցով անձնական շահի կորզմամբ:

Գործարարների բացասական վերաբերմունքը դեպի կոռուպցիան թելադրվում է նրանց անձնական բարոյական արժեքներով, կոռուպցիային դիմակայելու այլընտրանքային մեթոդներով և առաջին հերթին ընկերության գործունեության վրա կոռուպցիայի ունեցած ազդեցությամբ:

- Հարցման մասնակիցների կարծիքները կոռուպցիային հակազդող չեզոք, ոչ կառավարական կազմակերպության հիմնադրման հնարավորության վերաբերյալ, որի խնդիրն է լինելու կոռուպցիոն դեպքերի և կոռումպացված պաշտոնյաների անունների հրապարակումը մամուլում, հակասական են:
- Գործարար ասոցիացիաներին անդամակցելու միջոցով կոռուպցիային հակազդելու հնարավորությունը դեռևս չի ընկալվում որպես արդյունավետ այլընտրանք:
- Այն դեպքերում, երբ գործարարները պատրաստ են աջակցել հակակոռուպցիոն նախաձեռնություններին նույնիսկ անանուն մնալու պայմանով, նրանք գերադասում են գործել ոչ թե գործարար միավորումների կազմում, այլ միանձնյա:

Կոռուպցիայի դեմ պայքարի առավել արդյունավետ ռազմավարությունը պետք է ներառի մի կողմից ճիշտ ժամանակին և լավ կազմակերպված կառավարական միջոցառումներ և օրենսդրական կարգավորում, իսկ մյուս կողմից՝ այլընտրանքային այնպիսի միջոցների մշակում, ինչպիսիք են հակակոռուպցիոն կազմակերպությունները, հասարակության իրազեկումը և այլն:

- Հանրային ծառայությունների որակի բարձրացման և ոչ պաշտոնական վճարները բացառելու նպատակով կառավարությունը պետք է ամենից առաջ կենտրոնացնի իր ուժերը վարչարարական գործընթացների դյուրացման և արագացման վրա, բազմակողմանի և ստույգ տեղեկատվության տրամադրման, պետական պաշտոնյաների համար անընդհատ կրթական և ուսուցողական դասընթացների կազմակերպման վրա:
- Անհրաժեշտ տեղեկություններ (հաշվետվություններ, նամակներ և այլն) ներկայացման ժամանակ առաջարկվում է բացառել ՓՄՉ ներկայացուցիչների և պետպաշտոնյաների անձնական շփումը, այլ կերպ ասած՝ տեղեկությունները պետք է ուղարկվեն կամ փոստի, կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով:
- Կոռուպցիայի կրճատմանն ուղղված արդյունավետ, կոռուպցիոն դեպքերի վերահսկման և կոռուպցիայի դեմ պատժամիջոցների կիրառման նպատակով անկաշառ մարմնի ստեղծումը, նման դեպքերի և դրանցում ներգրավված անձանց անունների

հրապարակումը հարցման մասնակիցների կարծիքով այն առաջնահերթ միջոցառումներն են, որոնց վրա կառավարությունը պետք է կենտրոնացնի իր ուշադրությունը:

- Պետական պաշտոնյաների վարքագծի հստակ ձևակերպված կանոնները և հակակոռուպցիոն օրենքների ու սանկցիաների հետևողական կիրառումը կոռուպցիայի դեմ պայքարի հնարավոր միջոցներից են:
- Վարչական պաշտոնյաների գործելակերպի թափանցիկ կանոնների ու վարքագծի սկզբունքների մշակումը, պաշտոնյաների կողմից հաճախորդի նկատմամբ հարգալից վերաբերմունքի և վստահության մթնոլորտի ձևավորումը ևս կարող են դրական ազդեցություն ունենալ:

Չնայած որ ՓՄՁ ներկայացուցիչները կոռուպցիայի և կաշառակերության կրճատման համար առաջարկում են կիրառել հիմնականում վարչական և օրենքի կիրառման եղանակները, այս բարդ ոլորտում իրավիճակի շտկման համար անհրաժեշտ է մշակել ավելի հստակ ռազմավարություն: Իշխանության տարբեր ձևի չարաշահումների դեմ պետական խիստ հսկողությունը անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ գործարար միջավայրը կոռուպցիայից ձերբազատելու համար: Այս առումով Հայաստանի ՓՄՁ-երը պետք է իրենց դիտեն ոչ թե որպես կոռուպցիայի զոհ, այլ կոռուպցիայի դեմ պայքարի համազգային կոալիցիայի ռազմավարական գործընկեր: Հարցման մասնակից ՓՄՁ-ների կարծիքով, օրենսդրական փոփոխությունները պետք է զուգակցվեն հանրային ծառայությունների մատուցման որակի բարձրացմամբ, ինչպես նաև պաշտոնյաների «ծառայողական վերաբերմունքի» ձևավորմամբ:

Փոքր և միջին ձեռնարկատերերի մեծամասնությունը պատրաստ է հայտարարելու կոռուպցիոն դեպքերի և մասնակիցների մասին, ինչպես նաև օժանդակելու հետագա հակակոռուպցիոն մախաձեռնություններին:

Համաձայն հարցման մասնակիցների՝ կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթ միջոցառումներն են.

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

1. Ամբողջական և ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը:
2. Պետական պաշտոնյաների գործունեության թափանցիկ և բարոյական սկզբունքների մշակումը:

## **ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

1. Վերահսկման արդյունավետ, անկաշառ մարմնի ստեղծումը և պատժամիջոցների կիրառման մեխանիզմի մշակումը:
2. Կոռուպցիոն դեպքերի և դրանց մասնակիցների անունների բացեիբաց հայտարարումը:
3. Հակակոռուպցիոն հաշվետվողական համակարգի մշակումը:

## **VII. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՂԹԱՅԻ ԴԵՂՔՈՒՄԸ**

Կոռուպցիա բառը անգլերենում (corruption) կարելի է մեկնաբանել որպես հասարակության խարխիլում (Corruption = community rupture): Այսինքն, կոռուպցիան հասարակության դեմ ուղղված հանցանք է: Կոռուպցիան խարխիլում է հասարակության հիմքը: Կոռուպցիայի յուրաքանչյուր դեպք վնաս է պատճառում ոչ միայն դրա մասնակից անձանց, այլ ողջ հասարակությանը: Հակառակ դրան, թափանցիկությունը և արդարությունը հզորացնում ու հարստացնում են հասարակությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարող են կիրառվել տարբեր միջոցներ: Հաճախ դրանք պատժիչ բնույթի են. ոստիկանություն, դատարան, քրեական պատասխանատվություն, աուդիտ, վերահսկում և այլն: Պատժիչ բնույթի միջոցները՝ չափազանց կարևոր լինելով, հանդես են գալիս միայն որպես տեղ գտած հիմնախնդրին արձագանքելու միջոց: Դրանց կանխարգելող արդյունավետությունը չափազանց փոքր է: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ ՓՄՁ-ների շրջանում նման կառույցների նկատմամբ ունեցած վստահությունը բավականին ցածր է: Ավելի խիստ ասած, դրանք այն կառույցներն են, որոնք ՓՄՁ-ները որակում են որպես առավել կոռումպացված: Հետևաբար, ձեռնարկատերը խուսափում է դիմել ոստիկանություն կամ դատարան կոռուպցիայի դեմն առնելու համար:

Կանխարգելման միջոց ասելով մենք նկատի ունենք ձեռնարկատիրոջ ակտիվ ազդեցությունը տնտեսական իրավիճակի վրա: Սակայն, մեր հետազոտությունը վկայում է, որ գործարարները չունեն կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոցներ: Դա ամենևին էլ չի նշանակում, որ այդպիսի միջոցները զոյություն չունեն կամ արդյունավետ չեն:

Ուստի, այս ծրագրի շրջանակներում մենք փորձել ենք առաջարկել կանխարգելման այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են արգելակել հասարակության նահանջը «անկում – կոռուպցիա – անկում» ճանապարհով: Կանխարգելման միջոցառումների կարևորության հարցը եղել է գործարարների հետ ունեցած քննարկումների նյութ և արժանացել է դրական գնահատականի:

Կանխարգելման միջոցառումների հաջող կիրառման անհրաժեշտ նախապայմաններն են կոռուպցիայի հիմնախնդրի և, մասնավորապես, դրա պատճառների հստակ գիտակցումը: Ենթադրվում է նաև հասարակության պայքարելու պատրաստակամությունը և պատժիչ միջոցների արդյունավետության աճը (նստիկանություն, դատարան, աուդիտ և այլն), որը պետք է հիմք ծառայի կանխարգելման միջոցների համար: Էսկան նշանակություն ունի ոչ թափանցիկ գործընթացների շարունակական փոխակերպումը՝ թափանցիկության:

ՓՄՁ ոլորտի համար մենք նախանշել ենք հետևյալ կանխարգելման հետևողական միջոցները.

- Համատեղ գործողություններ;
- Կոռուպցիայի դեմ միջնորդված պայքար:

Հետազոտությունը ցույց տվեց, որ գործարարը կոռուպցիայի հետ առնչվելիս հակված չէ դիմելու պետական կառույցների օգնությանը: Պատճառը՝ այդ կառույցների անկողմնակալության և արդյունավետության նկատմամբ վստահության բացակայությունն է: Գործարարը վստահ չէ, որ պետական կառույցներին դիմելուց ինքն անձամբ, կամ իր բիզնեսը չի տուժի:

Արդյունքում, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման ապահով ու արժանահավատ մեխանիզմ գոյություն չունի: Կարելի է փաստել, որ կոռուպցիոն դեպքերի մեծամասնությունը ոչ միայն ուսումնասիրված, այլև արձանագրված չէ:

Խնդրի լուծման եղանակներից մեկը՝ ՓՄՁ-ներին առնչվող կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման ու արձանագրման անկախ մեխանիզմի մշակումն է: Խնդրի լուծումը կարող է ստանձնել հատուկ այդ նպատակով ստեղծված ասոցիացիա կամ հասարակական կազմակերպություն: Այդ կազմակերպությունը պետք է նախաձեռնի.

- ՓՄՁ-ներին առնչվող կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման ու արձանագրման անկախ մեխանիզմի մշակումը,
- առավել հաճախ հանդիպող կոռուպցիոն դեպքերի արձանագրումը;
- կոռուպցիայի հանգուցային աղբյուրների նույնացումն ու վերահսկումը,
- պետական և մասնագիտացված կառույցների համար տեղեկատվության պարբերական հրապարակում,

- կոռուպցիայի վերաբերյալ օրենսդրության վերանայման կամ պատշաճ կիրարկման լոբինգը:

Կոռուպցիայի դեմ պայքարի մեջ ընդգրկված կառույցների, ինչպիսիք են՝ բիզնես ասոցիացիաները, Ռեզիոնալ զարգացման կենտրոն/Թրանսպերենսի ինստիտուտը, Հայաստան, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը, համագործակցության միջոցով հնարավոր է և անհրաժեշտ է իրագրել հասարակությանը ՓՄՁ-ների կոռուպցիային դիմակայելու պատրաստակամության մասին: Հավատացած ենք, որ դա կարևոր քայլ է, եթե նկատի ունենանք, որ մեզանում դեռևս տարածված է գործարարի նկատմամբ բացասական վերաբերմունքը (գործարար = խարդախ):

Այդպիսի միջնորդությունը կարող է «Արժանապատիվ գործարարություն» մրցույթի տեսք ստանալ: Մեկ այլ հնարավորություն է «Էթիկայի կանոնների ապրանքանիշ»-ի սահմանումը: Այդ ապրանքանիշը կրելու իրավունքը կստանան այն ձեռնարկությունները, որոնք կապահովեն իրենց գործունեության թափանցիկությունը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՄՁ-ՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԿՈՌՈՊՑԻՈՆ ԴԵՊԸՆԵՐ

Ստորև բերված է գաղտնիության սկզբունքով ներկայացված ՓՄՁ-ների համար ամենարճիհանուր կոռուպցիոն դեպքերի նկարագրությունը:

- Ինձ հաճախ հարց են տալիս՝ անօրինական վճարները իմ բյուջեի որ հոդվածի հաշվին են արվում: Պատասխանն է՝ նման վճարներն արվում են միմիայն պետբյուջեի հաշվին:
- Հանձնաժողովի անդամները, որոնք սկզբում առաջնություն էին տվել մեր կազմակերպությանը, հետագայում փոփոխելով արձանագրությունը, «տեխնիկական պատճառներով» մեզ դուրս էին թողել մրցակիցների ցուցակից:
- Պետական մարմինների կողմից կազմակերպությանը գործելու արտոնագիր տրամադրելը տևում է 7-8 աշխատանքային օր: Ինձ համապատասխան կաշառքի դիմաց առաջարկվել է այն տրամադրել 2 աշխատանքային օրում:
- Խորհրդատվությունը, փաստաթղթերի ձևակերպումը և տրամադրումը չպետք է կախված լինի այն անձից, որն իրավասու է լուծելու տվյալ խնդիրը:
- Հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության աշխատակիցները չեն հեռանում խանութից առանց օդու շիշ կամ շոկոլադի տուփ վերցնելու:
- Մաքսատուրքերի չափի որոշման հարցի շուրջ «առևտուրը» սովորույթ է դարձել:
- Որտեղ էլ դիմեն որևէ խնդիր լուծելու համար, ստիպված են մեր արտադրատեսակներից հետս վերցնել: Պաշտոնյաները դա բնական են համարում, իսկ իմ կարծիքով դա կողոպուտ է:
- Չեմ ցանկանում որևէ բացասական կամ անհաճո բան ասել, քանի որ չգիտեմ, թե ինչ կլինի ինձ հետ, կամ ինձ ինչ է սպասվում:
- Իմ ձեռնարկությունում գողություն էր կատարվել, սակայն ոստիկանը ոչ մի ուշադրություն չդարձրեց իմ բողոքին: Նա նույնիսկ նեղություն չկրեց որևէ մեկին հարցաքննելու: Ես մեր երկրում ոչ մեկին և ոչնչի չեմ հավատում:
- Եղել են դեպքեր, երբ մրցույթի փաստաթղթերը նախապես բացվել են, և տեղեկատվությունը հասու է դարձել մրցակից կողմերին:

- Ես չհամաձայնվեցի վճարել, և շուտով իմ ավտոմեքենան գողացան: Ավտոմեքենան վերադարձվեց փրկագին վճարելուց հետո միայն:
- Շատերը կան, բայց նրանց անունները հայտնելով՝ խնդիրը չի լուծվի: Ահա, մեկը գալիս է և ասում. «Պարոն X-ը պատվերը ստանալու համար ինձ 10% է տալիս: Դու ին՞չ կասես»: Ես պատասխանում եմ նույն ոճով՝ 12%, և ստանում պատվերը:
- Դեպքը վերաբերում է ուղևորների և ուղեբեռի տեղափոխման մրցույթին մասնակցելու ու երթուղին շահելու հարցին: Առաջարկը մանրակրկիտ պատրաստվեց, ձևակերպվեց և բերվեց հնարավորինս ցածր գնի: Առաջարկվեցին նաև լրացուցիչ զեղչեր: Վերջապես մրցույթը կայացավ, սակայն, աստված գիտե ինչպես, բայց մրցույթում հաղթող ճանաչվեց բոլորովին այլ կազմակերպություն: Հետագայում պարզվեց, որ նրա առաջարկը մեր առաջարկից լավը չէր:
- Շինարարության իրականացման հանրային մրցույթում ներդրողին քաջ ծանոթ ընկերությունները առաջարկել էին անիրական ցածր գներ: Հաղթելով մրցույթը՝ հետագայում ներդրողը և կապալառուն կնքեցին պայմանագրի հավելված, որի համաձայն փոխվեցին նախկին գները:
- Բացի ներմուծվող ապրանքի համար գանձվող մաքսատուրքից՝ ես միշտ ստիպված եմ սահմանի վրա կաշառք վճարել:
- Հետևյալ դեպքերում գումար կամ նվեր միշտ տրվում է.
  1. Մաքսատան աշխատակիցներին (ամեն օր),
  2. Հիգիենիկ և հակահամաճարակային ու հրշեջ ծառայություններին:
- Ցանկանում եք ստանալ կառուցելու թույլտվություն: Շա՛տ բարի, չեք կարող ստանալ: Գոյություն ունեն բազմաթիվ օրինական արգելքներ: Պաշտոնյան պետք է օրենքը խախտի արագացնելու համար գործընթացը: Օրինական թույլտվություն ստանալը կարող է երկու տարի տևել: Դե՛, մտածե՛ք, ի՞նչ եք ընտրում՝ ցանկանում եք կառուցե՞լ և գո՞րծ անել, թե՞ հրաժարվում եք ձեր ծրագրերից :
- Այնքան շատ են շինծու, իրականում ոչինչ չանող պետական կառույցները/վարչությունները: Դեպքերի 90%-ում նրանք վատնում են մեր ժամանակը, քանի որ գործի ընթացքը իրենցից չի կախված:
- Ես պետք է էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիրը վերաձևակերպեի իմ ընկերության անունով: Դա

ինձնից երկար ժամանակ և անօրինական վճարների ձևով բավականաչափ մեծ գումար խլեց:

- Մրցույթի անցկացման ընթացքում հայտնվեցին մարդիկ, որոնք խոստանում էին բավականաչափ մեծ գումարների դիմաց մյուս մասնակիցներին համոզել չմասնակցել մրցույթին:
- Տեսուչն ինչ-որ բացթողում գտավ և 150 հազար դրամի տուգանք նախատեսող արձանագրությունը կազմելուց արաջ հարցրեց. «Դուք պատրաստվում եք վճարել՞ այս տուգանքը»: Դա փաստորեն նշանակում էր, որ նա առաջարկում է չեղյալ համարել այդ տուգանքը այն պայմանով, որ գումարի կեսը իրեն տրվի:
- Դատարանի հետ գործ ունենալ նշանակում է ամեն ինչ կորցնել :
- Շինարարության թույլտվության փաստաթղթերը պատրաստ են, սակայն ես չեմ կարող դրանք ստանալ, քանի որ պաշտոնյաները «մադարիչը» չեն կարողանում կիսել իրար մեջ:
- Հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայությունից թույլտվություն/արտոնագիր ստանալու համար 4 պաշտոնյա տվյալ կառույցից այցելեցին մեզ և տարածքների անբավարար լուսավորության պատրվակով մերժեցին: Համապատասխան հյուրասիրությունից հետո պարզվեց, որ դա ընդամենը սպասարկման կետ է, այլ ոչ թե կարի արտադրամաս և ամեն ինչ հարթվեց:
- Երբ ես գնացի հրշեջ ծառայության պաշտոնյայի մոտ շինարարության գործընթաց սկսելու թույլտվություն ստանալու համար, ստիպված էի կաշառք վճարել գործընթացի արագացման համար:
- Ես չեմ հավատում «պայծառ ապագային»: Պետական գաղտնիք է, թե ինչպես է փոքր ձեռներեցությունը գոյատևում, և ինչպես են անօրինական հարկային «արտոնություններն ու վարչարարական գիշումները» «օգնում» դրան:
- Գործնականում ես ամեն օր առնչվում եմ կաշառքի պահանջի հետ բոլոր այն կառույցներում և մակարդակներում, որոնք պատասխանատու են փաստաթղթերի տրման համար:
- Ներդրումային վարկ ստանալու գործընթացը բավականին բարդ է: Համապատասխան պաշտոնյայի բարյացակամության դիմաց ես վճարել եմ վարկի գումարի 10%-ը:
- Մաքսատան պաշտոնյաները ապրանքը արագ մաքսագերծելու համար հատուկ «գնացուցակ» ունեն: Չնայած մենք ներկրման

համար տուրք ենք վճարում, նրանք իրենց հերթին պետք է իրենց «տուրքը» ստանան՝ որպես «կոմիսիոն» վճար:

- Չնայած հարկային տեսուչին կաշառքը վճարված էր, սպասվող «աջակցությունը» այդպես էլ չստացանք: Բողոքի հետևանքով (այլ խախտումներ էլ էին գրանցվել) նա հեռացվեց աշխատանքից:
- Պայմանագրի արժեքի 10%-ի վճարումը կերաշխավորի ձեռ առաջարկի հաստատումը:
- Կոռուպցիայի ամենահիասթափեցնող դեպքն այն է, երբ ընկերությունը, որից ես ապրանք եմ ձեռք բերում, հաշիվ-ապրանքագիր չի տալիս:
- Մաքսային աշխատակիցները ձգձգում են բեռի մաքսագերծումը և փաստաթղթերի ձևակերպումը, պատճառաբանելով, որ դրանք ճիշտ չեն լրացված, սակայն փաստն այն է, որ նրանք կաշառքի են սպասում: Ես, անչափ կուշտ լինելով ոչ պաշտոնական վճարներ կատարելուց, հանձնարարեցի վարորդին խստորեն հետևել օրենքին և սպասել: Նա սպասեց շաբաթից ավելի: Վերջիվերջո մենք նորից ստիպված եղանք կաշառք տալ:
- Հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության ստուգում անցկացնող պաշտոնյաները ամենաազահներից են: Մեր փաստաթղթերը օբյեկտիվ պատճառներով միշտ չէ, որ կարգին են: Նրանք դա գիտեն, և նրանց այցելությունները բավականին հաճախակի են: Այդպիսով նրանք փող են աշխատում: Նրանք գոհ են, մենք՝ նույնպես:
- Փոքր ձեռներեցության ոլորտում կոռուպցիոն դեպքերը հանդիպում են հենց սկզբից և ամենուրեք՝ թույլտվությունները միշտ տրվում են հավելյալ վճարներ կորզելուց հետո միայն, քանի որ պաշտոնյաները միտումնավոր ձգձգում են գործը, մինչև կաշառք չտրվի: Ես հավելյալ գումարներ եմ տվել քաղապետարանում, ինչպես նաև փաստաբանին:
- Մաքսատան աշխատակիցը ապրանքի ներկրման համար կաշառք է պահանջում նույնիսկ այն դեպքում, երբ բոլոր փաստաթղթերը կարգին են:
- Հանրային ծառայությունների մատուցման պայմանագիրը ստանում ենք 10% «կոմիսիոնի» պայմանով:
- Ես խորապես համոզված եմ, որ տաքսու վարորդները ամենատուժածն են սեփականատիրոջ, պետության և վերահսկող կառույցների կողմից: Երթուղին ստանալու և

սպասարկելու համար ես պետք է գումար վճարեմ, եթե ոչ, նրանք ուրիշ վարորդ կգտնեն:

- Ես անձամբ երբեք կոռուպցիայի հետ չեմ առնչվել, սակայն շինարարական ոլորտը կարգավորող օրենքները չափազանց խիստ են. հավելյալ 20 քառ.մ տարածք վարձակալելու համար ես սպասեցի 6 ամսից ավելի և այդպես էլ չստացա պատասխանը: Վերջիվերջո ես դադարեցի սպասել և կոնտեյներ տեղադրեցի: Շինարարությանն առնչվող օրենքները պետք է հիմնովին բարեփոխվեն: Ես կաշառք չտվեցի, սակայն պետք էր հասկանալ, որ պաշտոնյաները դրան էին սպասում: Եթե կորցնես համբերությունդ, պետք է կաշառք տաս: Ավելին, ինքդ ստիպված կլինես կաշառք առաջարկել, միայն թե գործդ առաջ գնա:
- Օրենք մշակողները ամենակոռումպացվածն են, և ամենաանհավանական խոչընդոտները շինարարության ասպարեզում են: Լինի դա էլեկտրականության, ջրագծի թե կոյուղու անցկացման թույլտվություն: Ձուր անցկացնելու համար պետք է ունենալ նախագիծ, ջրմուղի, հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության թույլտվությունները ու ամիսներով սպասել: Սա իսկապես չափազանց է:
- Պետական կազմակերպություններին ապրանքների մատակարարման մրցույթներում միշտ հաղթում են այն ընկերությունները, որոնք տվյալ պետական կազմակերպության աշխատակազմի ընկերական շրջապատից են:
- Մաքսատանը սպասելը կապված է կոռուպցիայի հետ: Մաքսատան պաշտոնյաներն ունեն մարդիկ, որոնցից փոքր գումարներ են ստանում, և որոնք մաքսատանը ժամանակ չեն կորցնում:
- Մեփականաշնորհման գործընթացին մասնակցելու համար ինձանից շատ մեծ կաշառք պահանջեցին: Բացի դրանից, ես պետք է նախօրոք վճարումներ կատարեի: Ես կատարեցի բոլոր պայմանները: Գործարքը չկայացավ, սակայն ես իմ փողերը հետ չստացա: Կաշառք ստանալու ակնկալիքով պաշտոնյան տարիներով ձգձգում է գործը:
- Ես երկու տարի սպասում էի կառուցման թույլտվություն ստանալու համար: Երբ կառույցը ավարտվեց, առանձնապես դժվար էր հրշեջ ծառայության, ջրագծի և կոյուղու անցկացման թույլտվություններ ստանալը: Նման դեպքերում քեզ ստիպում են իրենց կողմից երաշխավորված մարդկանց միջոցով

վերանախագծում կատարել և այդ միջոցով ոչ պաշտոնական գումարներ ստանալ:

- Պետական պաշտոնյան գործ սկսելու թույլտվության համար կաշառք պահանջեց, որը պետք է լիներ կամ կանխիկ դրամի կամ չլսված գնով ապրանքի ձևով: Ավելին, պետական պաշտոնյան համապատասխան վճարի դիմաց առաջարկեց իր ծառայությունները՝ գործընկեր գտնելու համար:
- Հանրային ծառայությունների մատուցման մրցույթի մասնակիցները պետք է որոշ գումար վճարեին անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները ստանալու համար: Այնուհետև մրցակիցների ցանկում ընդգրկվելու համար զգալի գումար պահանջվեց, և էլ ավելի մեծ կաշառք՝ հաղթելու համար:
- Ամեն օր և ամենուր մենք հանդիպում ենք կոռուպցիոն դեպքերի, սակայն շատ դժվար է ապացուցել դրանք:
- Կոռուպցիան ամենուրեք է: Կասկածում եմ, որ այն երբևիցե կվերահսկվի:

ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԸՆՏՐԱՆՈՒ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՂՅՈՒՄԱԿ 19: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՃՅՈՂԻ

Գործունեության ոլորտը	Քանակը	%
Գյուղատնտեսություն	6	5.8
Հյուրանոց/ռեստորանային գործ	6	5.8
Շինարարություն	6	5.8
Մանրածախ առևտուր	28	26.9
Արտադրություն (արդյունաբերություն)	38	36.5
Ծառայություններ	20	19.2

ԱՂՅՈՒՄԱԿ 20: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
ՔԱՆԱԿԻ

Աշխատակիցների քանակը	Ընդհանուր թիվը	%
1	13	12.5
2 – 5	38	36.5
6 – 25	38	36.5
26 – 30	9	8,7
31 – 50	4	3.8
51 – 100	1	1,0
Չեն պատասխանել	1	0,3

ԱՂՅՈՒՄԱԿ 21: ՀԱՐՑԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ԴԻՐՔԸ

Մասնակցի դիրքը	Քանակը	%
Սեփականատեր	52	50.0
Տնօրեն/մենեջեր	38	36.5
Խորհրդի անդամ	11	10.6
Մասնագետ	2	1.9
Չեն պատասխանել	3	2.9

ԱՂՅՈՒՄԱԿ 22: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՅՐԻ

Մարզ	թիվ	%
Երևան	39	37.5
Գեղարքունիք	12	11.5
Լոռի	10	9.6
Վայոց ձոր	18	17.3
Կոտայք	13	12.5
Շիրակ	14	13.5

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՀԱՐՑԱՇԱՐԻ ՆՍՈՒՇ

**1. Դասակարգեք մեր երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտները:**

1. Ձեռնարկության հիմնադրման կարգը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

2. Սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

3. Հարկային բեռը, բարդ հարկային համակարգը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

4. Թույլտվությունների և լիցենզիաների ստացման կարգը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

5. Կոռուպցիան պետական սեկտորում

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

6. Կոռուպցիան բիզնես միջավայրում

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

7. Վարկերի դժվար մատչելիությունը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

8. Վարկերի բարձր տոկոսադրույքները

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

9. Անբավարար պետական աջակցությունը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

10. ՓՄՁ-ների գործունեությունը կարգավորող օրենքների անհետևողական փոփոխությունները

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

11. Դատաիրավական համակարգի կայացած չլինելը

Խիստ էական է:  Էական է:  Էական չէ:

**2. Դուք անձնապես երբևէ ստիպված եղե՞լ եք կատարելու ոչ պաշտոնական վճարումներ այս կամ այն պետական ծառայությունը ստանալու համար:**

Այո:  Ոչ:  Չեմ ցանկանում պատասխանել:

**3. Որքա՞ն հաճախ են գործարարները ստիպված լինում հանրային ծառայությունների դիմաց ոչ պաշտոնական վճարումներ կատարել:**

1. Կառուցելու թույլտվության համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

2. Էլ.հոսանքի, ջրագծի, հեռախոսագծի անցկացման համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

2. Համայնքի համաձայնությունը ստանալու համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

3. Կազմակերպության գրանցման համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

4. Վարկ ստանալու համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

5. Դատական գործընթացի արագացման համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

6. Կադաստրում սեփականության իրավունքի գրանցման համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

7. Պետական տեղեկություն հաղթելու համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

8. Մաքսագերծման համար

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

9. Հարկային մարմիններում

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

10. Այլ ծառայություններ (նշել ինչպիսի). .....

Միշտ:  Հաճախ:  Երբեմն:  Երբեք:

**4. Պետական ծառայողների հետ հարաբերվելիս ո՞րն է ավելի հաճախ հանդիպում՝**

Պաշտոնյան է կաշառք պահանջում:

Գործարարն է կաշառք առաջարկում:

**5. Ձեր կարծիքով օրենքով ո՞վ պետք է պատժվի (միայն մեկ պատասխան).**

Կաշառք առաջարկողը:

Կաշառք պահանջողը:

Երկուսն էլ:

Կախված է հանգամանքներից:

6. Եթե կաշառքը տրված է, կարելի՞ է արդյոք վստահ լինել, որ պայմանավորվածությունը չի խախտվի (միայն մեկ պատասխան):

Այո:  Ոչ:

7. Ունե՞ք արդյոք անձնական փորձ, երբ կաշառքը վճարել եք, սակայն պաշտոնյան իր խոստումը չի կատարել:

Այո:  Ոչ:  Չեմ ցանկանում պատասխանել:

8. Ըստ Ձեզ՝ պայմանագրերի ո՞ր մասն է կնքվում կոռուպցիայի շնորհիվ (միայն 1 պատասխան):

Չնչին:  Մոտ 1/3:  Մոտ կեսը:  Կեսից ավելին:

Բոլորը:

9. Արդյո՞ք հրապարակված են հանրային ծառայությունների և գործարքների դիմաց պաշտոնական վճարների և վճարման կարգի մասին տեղեկությունները (միայն մեկ պատասխան):

Այո, հանրային ծառայությունների և գործարքների գները հրապարակված են:

Գները հրապարակված են, բայց պահանջվում են մաս լրացուցիչ ոչ պաշտոնական վճարներ:

Գները պաշտոնապես հրապարակված չեն, ուստի վճարները հաճախ կամայական են:

10. Կարծու՞մ եք արդյոք, որ կոռուպցիոն պրակտիկայի շրջանակը կարելի է կրճատել բարեփոխելով հանրային ծառայությունների մատուցման կարգն ու որակը:

Այո:  Գուցե:  Ոչ:  Չգիտեմ:

11. Եթե այո, ո՞ր խնդիրների վրա պետք է առաջին հերթին կենտրոնանա կառավարությունը

1. Վերահսկող կառույցի ստեղծում և վերահսկման արդյունավետ համակարգի մշակում.

Խիստ կարևոր է:  Կարևոր է:  Կարևոր չէ:

2. Կոռուպցիայի դեպքերի հայտնաբերում և կոռումպացված անձանց անունների հրապարակում.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

3. Հանրային հաստատությունների համար էթիկայի սկզբունքների մշակում և ներդրում.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

4. Հակակոռուպցիոն նախաձեռնությունների շրջանակներում համագործակցություն բիզնես միավորումների և այլ ոչ կառավարական կազմակերպությունների հետ.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

5. Լիարժեք ու հստակ տեղեկատվության տրամադրում.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

6. Գործունեության թափանցիկ սկզբունքների և կանոնների մշակում.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

7. Կառավարման գործընթացի պարզեցում.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

8. Հանրային ծառայությունների մատուցման որակի կատարելագործում.

Խիստ կարևոր է:       Կարևոր է:       Կարևոր չէ:

**12. Երբևէ բողոք ներկայացրե՞լ եք հանրային ծառայությունների որակի վերաբերյալ (միայն մեկ պատասխան).**

Այո:       Ոչ:

**13. Եթե ոչ, ապա ինչու՞ (միայն մեկ պատասխան).**

Չգիտեմ ու՞մ բողոքել և ինչպե՞ս:

Ժամանակի զուր կորուստ է:

Բողոքը արդյունք չի բերի:

Չգուշանում եմ բացասական հետևանքներից:

Այլ պատճառներ (նշեք ինչպիսի) .....

**14. Վստահու՞մ եք արդյոք մեր երկրի իրավական համակարգին (միայն մեկ պատասխան).**

Այո:     Ոչ:     Ծանոթ չեմ:

**15. Եթե ոչ, ինչու՞:**

Ոլորտը կարգավորող օրենքները և պետական քաղաքականությունը ազդում են ֆինանսապես (պահանջելով ներդրումներ), սակայն չեն խթանում բիզնեսի զարգացումը:

Ոլորտը կարգավորող քաղաքականությունը և օրենսդրությունը երկիմաստ են:

Օրենքների կիրարկումը կամայական է:

Օրենքի խախտումների վերահսկման և պատժամիջոցների կիրառման համակարգը բացակայում է կամ կատարյալ չէ:

Այլ պատճառներ (նշեք ինչպիսի) .....

**16. Արդյոք տեղա՞յ եք, թե պետական ծառայողը ինչպիսի վարքագծի դեպքում է խախտում օրենքը, և ինչպիսի՞ պատիժ է հասնում նման դեպքում (միայն մեկ պատասխան).**

Տեղյակ չեմ:

Տեղյակ եմ որոշ չափով:

Կուզենայի տեղեկանալ, բայց չգիտեմ ինչպես:

Տեղյակ եմ:

**17. Եթե կիրառվեն կոռուպցիայի դեմ ուղղված օրենքներն ու սանկցիաները, պետական ծառայողը կհրաժարվի՞ արդյոք կաշառք վերցնելուց:**

Այո:     Գուցե:     Ոչ:     Չգիտեմ:

**18. Եթե այո, ապա ինչպիսի՞ դրական տեղաշարժ կարելի է ակնկալել:**

- Կճևավորվեն փոխադարձ հարաբերությունների էթիկայի կանոնները:
- Կբարձրանա հանրային հաստատությունների վարկանիշը:
- Կաճի պետական ծառայողների անձնական պատասխանատվությունը:
- Կընդլայնվի և ավելի արդյունավետ կդառնա հանրային ծառայությունների ոլորտը:
- Կաճի ՓՄՉ-ների թիվն ու դրանց դերը երկրի տնտեսական զարգացման մեջ:

**19. Եթե դուք ստիպված եք եղել կաշառք տալ, պատրաստ եք արդյոք հայտնել չեզոք մի «ժակա-կոռուպցիոն» կառույցի կաշառք վերցրած անձի անունը և գումարի չափը (միայն մեկ պատասխան):**

- Պատրաստ եմ:
- Այո, եթե վստահ լինեմ, որ անանուն կմնամ:
- Ոչ, վախենում եմ բացասական հետևանքներից:
- Ոչ, այլ պատճառներով (նշեք ինչպիսի) .....

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ո՞ր մարզում է գործում Ձեր ձեռնարկությունը:**

- 1. Երևան 2. Շիրակ 3. Լոռի
- 4. Վայոց ձոր 5. Կոտայք 6. Գեղարքունիք

**2. Բիզնեսի ո՞ր ոլորտին է պատկանում Ձեր ձեռնարկությունը:**

- 1. Գյուղատնտեսություն
- 2. Հյուրանոցային/ռեստորանային բիզնես
- 3. Ֆինանսական ծառայություններ
- 4. Տրանսպորտ
- 5. Արտադրություն
- սպասարկում (ջուր, կոյուղի, գազ, այլ)
- 6. Մեծածախ առևտուր
- 7. Մանրածախ առևտուր
- 8. Շինարարություն
- 9. Ենթակառույցներ
- 10. Կոմունալ
- 11. Այլ (նշել որը) .....

**3. Ո՞րն է Ձեր դիրքը ձեռնարկությունում:**

- 1. Սեփականատեր/համասեփականատեր
- 2. Տնօրեն
- 3. Անհատ ձեռներեց
- 4. Խորհրդի անդամ

**4. Քանի՞ աշխատող ունեք:**

- 1. Մեկ
- 2. 1 - 5
- 3. 6 – 25
- 4. 26 – 30
- 5. 31-50
- 6. 51 - 100

**5. Բիզնես ասոցիացիայի անդամ ե՞ք:**

- 1. Այո: Նշեք որ .....
- 2. Ոչ, անդամ չեմ, բայց կարիքը զգում եմ:

3. Ոչ, կարիքը չեմ զգում:

***6. Մտադիր ե՞ք հետազայում ևս մասնակցելու հակակոռուպցիոն միջոցառումներին և օժանդակելու դրանց:***

1. Այո: 2. Գուցե: 3. Ոչ:

Շնորհակալություն համագործակցության համար:

## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ, Երևան 10, Տիգրան Մեծի պող. 4

Հեռ./Ֆաքս (374 10) 56 24 00

Էլ.փոստ [inbox@fsmb.am](mailto:inbox@fsmb.am)

Էլ.կայք [www.fsmb.am](http://www.fsmb.am)

---

© FSMB 2006